

ՄԳՏԿ անդամ պետությունների կառավարիչների հանձնաժողովի նստաշրջան
Մինսկում
/2009 թ., հուլիսի 9-11/

2009 թվականի հուլիսի 9-ին Բելոռուսի մայրաքաղաք Մինսկում սկսվեց Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (ՄԳՏԿ) անդամ պետությունների կառավարիչների խորհրդի 49-րդ նստաշրջանը, որին մասնակցելու նպատակով հուլիսի 7-12-ը քառօրյա այցով Մինսկ էր մեկնել ՄԳՏԿ-ում կոորդինացիոն կոմիտեի անդամ, ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանը:

Նստաշրջանին մասնակցում էին ՄԳՏԿ անդամ կողմերի՝ Կանադայի, Եվրամիության, Ճապոնիայի, Կորեայի, Ռուսաստանի Դաշնության, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Հայաստանի Հանրապետության, Բելոռուսիայի, Վրաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի եվ Տաջիկստանի ներկայացուցիչները:

Օրակարգային հիմնական հարցերից էր ծրագրերի ֆինանսավորման վերջնական աղյուսակի հաստատումը: ՄԳՏԿ-ն հաստատեց 6 նոր ծրագիր՝ շվեդ 782 հզր ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ՝ ՌԴ-ից, Ղրղզստանից եւ Բելոռուսիայից ներկայացված ծրագրերը ֆինանսավորելու նպատակով:

Հայաստանից ֆինանսավորման ներկայացված 19 ծրագրերից 17-ը հավաքեցին բարձր միավորներ եւ երաշխավորվեցին ֆինանսավորման, սակայն միջոցների կրճատման եւ սղության պատճառով հետաձգվեցին: Ընդհանրապես ՄԳՏԿ միջոցները կրճատվել են մոտ 10 անգամ:

Հաջորդ ֆինանսական կիսամյակում քննարկելու համար նախագծերի ներկայացման վերջնաժամկետ նշանակվեց 2009 թվականի սեպտեմբերի 5-ը:

Նստաշրջանի ընթացքում քննարկվեցին նաեւ հարցեր՝ կապված ՄԳՏԿ հետագա ծրագրերի եւ գործունեության հետ, ինչպես նաեւ ՄԳՏԿ վերակազմակերպման հետ կապված աշխատանքային հարցեր: Քննարկվեցին այնպիսի մոտեցումներ եւ մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան առավել արդյունավետ եւ ձկուն անցում կատարել նոր վերակազմակերպված համակարգի: Դրանցից կարելու էր ծրագրերի ընտրության չափորոշիչներում նախատեսվող փոփոխությունները: Այսուհետ ՄԳՏԿ կողմից ֆինանսավորվող ծրագրերում գերակշիռ դեր են կազմելու հետեւյալ ոլորտներում ներկայացվող ծրագրերը՝

- համընդհանուր անվտանգություն,
- հաստատուն էներգետիկ տեխնոլոգիա,
- բնապահպանական տեխնոլոգիա,
- կենսատեխնոլոգիա, առողջապահություն եւ գյուղատնտեսություն,
- բարձր էներգիաների ֆիզիկա,
- նանոտեխնոլոգիա:

Կարելու է նաեւ ծրագրերում երիտասարդ գիտնականների մասնակցությունը:

ՄԳՏԿ կողմից խրախուսվելու են նոր գործընկեր կազմակերպությունների ներգրավումը, ինչպես նաեւ համատեղ ներկայացվող ծրագրերը: Խորհուրդը քննարկեց նաեւ անդամ պետությունների ինչպես պետական, այնպես էլ մասնավոր կառույցների մասնակցությամբ ծրագրերի եւ նախագծերի համաֆինանսավորման խնդիրները: Ընդգծվեց համաֆինանսավորման վերաբերյալ համաձայնագրերի արագ կնքման անհրաժեշտությունը:

Հաջորդ նստաշրջանը պլանավորվեց անցկացնել Մոսկվայում 2009 թվականի դեկտեմբերի 9-ին: Նույն ամսին պլանավորվեց կազմակերպել նաեւ ՄԳՏԿ 15-ամյա հոբելյանական արարողությունը:

Մինսկ այցելության ընթացքում ԳՊԿ նախագահը հանդիպեց նաեւ Բելոռուսի գիտության պետական կոմիտեի նորանշանակ նախագահ Ալեքսանդր Վոյտովի եւ Բելոռուսիայում Հայաստանի դեսպան Օլեգ Եսայանի հետ:

Գիտության պետական կոմիտեների ղեկավարները քննարկեցին հետագա համագործակցության ծրագրերը, պայմանավորվածություն ձեռք բերվեց կնքել երկկողմ գործակցության պայմանագիր, որի նախնական տարբերակը քննարկման փուլում է:

Դեսպանի հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին Հայաստան-Բելոռուսիա գիտական կապերի զարգացման եւ խթանման հարցերը: